Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ ԹԻՎ 6-Ն, 9-Ա, 10-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 6-Ն որոշման նախաբանում հղում պետք է կատարել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասերին, ինչպես նաև նշել, թե ում կողմից է կատարվել համայնքի բյուջեում փոփոխություններ և լրացում կատարելու առաջարկը: Բացի այդ, որոշման համարակալումը սխալ է գրառված:

Թիվ 9-Ա որոշման հավելվածում նշված չեն աճուրդով օտարվող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի որակական հատկանիշները (հողի կարգը, ջրովի/անջրդի): Այդ իսկ պատճառով հնարավոր չէ եզրակացություն կազմել աճուրդով օտարվող հողամասերի մեկնարկային գների վերաբերյալ:

Թիվ 10-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի <<Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող կառուցապատված հողամասերի, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչներ սահմանելու մասին>> N 550-Ն որոշման համապատասխան կետին ու ենթակետին, որպեսզի հստակեցվի, թե ընդլայնման նպատակով օտարվող հողամասը որոշմամբ սահմանված որ չափորոշիչին է համապատասխանում:

Կատարող՝ Վ. Հովհաննիսյան
27.02.2020թ.